ՀՏԴ : 929:330(479.25)Սուվարյան

ՅՈՒՐԻ ՄԻՔԱՅԵԼԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ
(Ծննդյան 80-ամյակի առթիվ)*

Լրացավ վաստակաշատ գիտնական, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Յուրի Սուվարյանի ծննդյան 80-ամյակը: Ծնվել է 1943-ի մայիսի 25-ին ԼՂ Սղնախ գյուղում: 1960-ին ավարտել է Ավետարանոց գյուղի միջնակարգ դպրոցը, 1965-ին՝ Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը, 1968-ին՝ ասպիրանտուրան:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Միքայելի Սուվարյանը, իր ավելի քան 55 տարիների գիտական գործունեությամբ, մեծ նվաճումների է հասել տնտեսագիտության ասպարեզում, ակտիվ գիտահետազոտական աշխատանք է կատարել տնտեսագիտության և կառավարման տեսության հիմնարար խնդիրների վերաբերյալ:

Նրա գիտական հետաքրքրությունների ոլորտում են կառավարման տեսության և հայ կառավարչական մտքի պատմության արդի հիմնահարցերը: Նա ցուցաբերել է նոր մոտեցումներ ռազմավարական կառավարման էության և սկզբունքների մեկնաբանման, գործարարության ծրագրի մշակման մեթոդաբանության զարգացման ասպարեզում: Հայ իրականության մեջ պրոֆ. Յու. Սուվարյանը առաջինն է անդրադարձել հանրային կառավարման էության, մեթոդաբանության ու պատմական զարգացման հարցերին և առաջարկել յուրօրինակ լուծումներ:

Անդրադառնալով «Հանրային կառավարման տեսություն և պատմություն» գրքի անգլերեն հրատարակությանը, Կանադայի Կարլտոնի համալսարանի Հանրային քաղաքականության և կառավարման դպրոցի պրոֆեսոր, Կառավարման և հանրային մենեջմենթի կենտրոնի տնօրեն Լեսլի Փալը գրել է. «Շատ տպավորված եմ դրա լայն ընդգրկունությամբ: Շատ հազվադեպ կարելի է հանդիպել մեկին, ով տվյալ ոլորտի պատմությունը տեսնում է նման պատմական խորությամբ և, իհարկե տարածաշրջանային պատկերը շատ հետաքրքիր էր ինձ համար»:

Մասնակցել է հանրապետական, համամիութենական և միջազգային գիտաժողովների, որոնցում ներկայացրել է իր հետազոտությունների արդյունքները, իսկ դրանց մի մասը լույս է տեսել միջազգային հրապարակումներում: Պրոֆ. Յու. Սուվարյանը հրատարակել է 305 գիտական աշխատություն, այդ թվում՝ 48 մենագրություն, դասագիրք և ուսումնական ձեռնարկ: Նրա գիտա-

* Ներկայացվել է 07. VI. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:

կան ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ տնտեսագիտության դոկտորի և թեկնածուի գիտական աստիճաններ են ստացել հարյուրից ավելի ասպիրանտ ու հայցորդ: Կառավարման մասնագիտությամբ գիտական կադրերի մեծ մասը նրա սաներն են, հեղինակել է կառավարման տեսության հիմնարար աշխատություններ, ահա թե ինչու Յու. Սուվարյանը համարվում է կառավարման գիտության արդի հայկական դպրոցի հիմնադիրը:

2006 թ. Յու. Սուվարյանը, դառնալով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր, մեծ եռանդով ձեռնամուխ եղավ կրթահամակարգի բովանդակային և կառուցվածքային արմատական վերափոխումների՝ համահունչ միջազգային պահանջներին: 2006 թ. նա ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2010 թ.՝ իսկական անդամ, 2011 թ.՝ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար:

Յու. Սուվարյանը 2006–2018 թթ. ՀՊՏՀ-ում գործող գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահն էր, 2006–2011 թթ. եղել է «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդեսի գլխավոր խմբագիրը, հայրենական ու միջազգային գիտական հանդեսների խմբագրական խորհուրդների, հայրենի բարձրագույն խորհրդի անդամ է:

Ակադեմիկոս Յու. Սուվարյանի մասնագիտական բարձր կարողությունները, գիտամանկավարժական վաստակը գնահատված են «Անանիա Շիրակացի» (2000), ԼՂՀ «Մայրական երախտագիտության» (2007), «Վաչագան Բարեպաշտ» (2013), միջազ. փիլիս. Ակադեմիայի «Դավիթ Անհաղթ», «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի (2011), ՀՀ Ազգային ժողովի «Պատվո մեդալ» (2013 թ.) մեդալներով և «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի (2017) շքանշանով: 2014 թ. արժանացել է Հայաստանի Հանրապետության Գիտության վաստակավոր գործչի կոչման: Նա ընտրվել է Բնական գիտությունների ռուսական (2016 թ.) և Եվրոպական (2017 թ.) ակադեմիաների արտասահմանյան անդամ, Դոնի Ռոստովի պետական տնտեսագիտական, Ռուս-հայկական, Արցախի և այլ համալսարանների պատվավոր պրոֆեսոր է:

Ներկայումս Յուրի Սուվարյանը մեծ ծավալի գիտակազմակերպչական աշխատանքներ է կատարում ՀՀ ԳԱԱ համակարգում:

Սիրով շնորհավորում ենք մեծ գիտնականին՝ ծննդյան հոբելյանի առթիվ: Ցանկանում ենք քաջառողջություն, երկար տարիների կյանք, անսպառ եռանդ, արևշատություն և գիտական նորանոր հաջողություններ:

ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ